Թէոս ախպերը փոքրիկ մարդ էր, կարճահասակ, գորշ եւ մելամաղձոտ դէմքով, սուր եւ թափանցող աչքերով: Նրա մէջքի հազիւ նշմարելի սապատը ամենեւին չէր խանգարի կազմոածքի բարեձեւութիւնը, եթէ գլուխը չափազանց խորն ընկած չլինէր ուսերի մէջ: Բայց այդ ահագին գլուխը իր լայն ճակատով եւ ալեխառն, գանգուր մազերով, եթէ դրուած լինէր մի բարձր հասակի վրայ, անտարակոյս, Թէոս ախպերը աշխարհի գեղեցիկ տղամարդերից մէկը կը լինէր: Ինչպէս վանեցի, նա դեռ իր պատանեկութեան հասակում գնաց Կ, Պոլիս իր բախտը փորձելու: (Հազիւ կարելի է գտնել մի վանեցի, որ իր կեանքում մի քանի անգամ Պոլիս գնացած չլինի): Նա շատ գործերի ձեռք զարկեց, բայց ոչինչ բանում չյաջողեց նրան: Եթէ նրա մարմինը բնական պակասութիւններ չունենար, եթէ նա ուժեղ մարդ լինէր, կարող էր իր հայրենակիցների եւ այլ հայաստանցիների նման Պոլսում համալութեան (բեռնակրութիւն) անել, ղայըղջի (նաւաստի) լինել, թուլումբաջիների (հրդեհաշէջների) մէջ մտնել եւ, վերջապէս, էյվազ (տան սպասաւոր) լինել: Իսկ այդ վերջին ծառայութեան համար հարկաւոր էր վայելչահասակ լինել եւ, պարաններին ու տիկիններին դիւր գալու համար, սիրուն դէմք ունենալ, որոնցից զուրկ էր Թէոս ախպերը: Միակ գործը, որի մէջ նա փոքր ի շատէ յաջողութիւն գտաւ, էր մի սրճատան մէջ ղահոէ եփողի օգնականի պաշտօն գտնել: Այստեղ նա հազիւ կարողացաւ այնքան փող վաստակել, որ ճանապարհի ծախք ունեցաւ իր հայրենիքը վերադառնալու: Թէեւ նա վերադարձաւ դատարկ քսակով, բայց պանդխտութեան դառն փորձերի մէջ խրատուած, շատ բան տեսած, շատ բան սովորած եւ շատ բաներից եւս հրաժարուած վերադարձաւ...

Թէոս ախպերը երկար չմնաց մեզ մօտ, շտապեց սրճատունը՝ իր միւս յաճախորդներին եւս գոհացնելու համար: Այդ միջոցին սենեակի մէջ բացուեցաւ մի դուռ եւ այնտեղից ներս վազեց մի երեխայ, որը, մեզ տեսնելով, մի քանի քայլ հեռաւորութեան վրայ կանգնեց եւ, մի քանի վայրկեան զարմացած կերպով նայելով մեզ վրայ, կրկին նոյն դռնով դուրս փախաւ, ճչալով.

— Ես հիմա լաւ եմ, պարոն բժշկապետ, էլ դեղ չեմ խմի:

Ես հասկացայ, որ Ասլանը այդ տան մէջ օտար չէր:

— Դու ճանաչուեցար, — ասացի նրան, — փոքրիկը ճանաչեց քեզ:

— Վնաս չունի, նա խելացի երեխայ է, նա ինձ չի մատնի, — պատասխանեց նա իր շուրջը նայելով: Երեւի մէկին սպասում էր:

Ես Ասլանին միայնակ թողեցի եւ մտայ սրճատունը, որը կից էր Թէոս ախպոր բնակարանին: Տան ետեւի կողմում բնակւում էր նրա ընտանիքը,